



94. ԱՇԿԱԾԱԿ ԱՌՃԻԿԸ

Մին հեռու կեղ հարս քինանցած մին ախճիկ մին օր մըտկըմը տինըմ ա քինան հերանց, ուրան հորն ու մորը տենալի: Ճընապի հացի մե տընըմ ա մին տըպակած հավ, մին դազ, մին օրդանկ ու մին ոխճարի բուղ, տալիս ա կըռնատակը հու ճընապա ընգնըմ: Հենց որ արևը մին սիջիմաբոյ պըցրանըմ ա, օրը չեչտ ա տանոնըմ, նըստըմ ա մին անպըրի դըրադի, հավն ուտիլի: Ըշտեղան-շտեղ մին հալից ընգած պառավ ա ուստ կանլիս, խընթըմ ա ուրան էլ պանժին հանի իլածիցը, համա ախճիկը հուջոն ա քաչըմ, մին թիքա էլ ա տալիս չի:

Ուտըմ ա պըրծնըմ, անպըրիցն էլ մին դոյընջան ցուրտ ճուր ա վրիցը խմըմ հու փըռնըմ ճընապի տուտը: Քսօրին նըստըմ ա մին ծառի չվաքըմ դազն անուշ անիլի, էլհան իրևըմ ա էն պառավը, մին կուտուր միս ա ուզըմ: Ախճիկը էլհան հուջոն ա քաչըմ, էլհան մին թիքա էլ ա տալիս չի, ուտըմ ա պըրծնըմ, ընգնըմ ճընապա:

Բոլգոնը հըսնըմ ա հերանցը տուտը: Հերն ու մերը ուրխանըմ են, որ ուրանց ախճիկը սաղ-սալամաթ, ուրան ոտովը եկել ա, հանլան տըպակած օրդանկ ու ոխճարի բուղ էլ ա պերել:

Սուփրա են պանց անըմ, ուրուր նհետ հաց ուտեն, համա ախճիկը ըստեղ էլ ա թանրավըմ, պերածը քաչըմ ա ուրան առաչը, ասըմ ա. — էս իմ պանժինն ա, ոչ մինին տալի չի:

Հերն ու մերը աչկածակ ախճկանը տուտ են անըմ տանիցը, քամակիցը չպըրտըմ պերածը: Հենց էտ վախտին մին սոված թազի հափ ա անըմ էտ եղալի թիքեքը հու հայդա՛ ...

Ախճիկը ճարը կտրած մին ունդ ա փըռնըմ քինըմ: էտ ունդը ընդան պերըմ ա քոլը: Ահը սրտըմը կուշ ա կանլիս մին ծառի տակի: Իչքան վախտ ա անց կենըմ. էտ էլ ինքը գիդան, բուրդան աչկը պանց ա անըմ, թան չէ, տենըմ ա համան պառավը կոխկին կաղնած:

Պառավը, որ լըմ ա ախճկա կլխին եկածը, ասըմ ա. — Թան որ երեզ ինձ մին թիքան միս յա հաց տված ինիր, ըսօր կեսը քեզ կըտի: Քանիչ որ աչկըտ ծակ ա, մինակ հողը քե կըկշտըցնի:

Ասիլն ու համփարցվիլը մին ա ինրմ: Ախճիկը քոլըմը մնրմ ա
մինակ հու սոված: Մինչու լիսը պնցվիլը սըրտաճանք ա ինրմ,
սատկըմ, մեյիդը կելի փայ ա տնոնըմ: Չարը չարով ա խըփանվըմ:
Դե ես էլ հու աչկածակ չեմ: Հենց որ երգնքեն խնձոր վեր
տնոնն, չիմը կըտամ ծեղ:

